ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ N 6-Ա

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Բերդի տարածքային ստորաբաժանման 11 մարտի 2011 թվականի ,,Ծառայությունների մատուցման,, հաշիվը

**Համայնքի ավագանին որոշում է.**

Համայնքի վարչական բյուջեի ,,Պահուստային ֆոնդ,,-ից 51600 դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Բերդի տարածքային ստորաբաժանմանը:

Այդ նպատակով համայնքի վարչական բյուջեի ,,Պահուստային ֆոնդ,,-ից 51600 դրամ ուղղել համայնքի ,,Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ,, նախահաշվի /01.06.01.51/ ,,Մասնագիտական ծառայություն,, 4241 հոդվածին:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 8 -Ն

# ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով, համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները

**համայնքի ավագանին որոշում է**

Համայնքի ավագանու 2011 թվականի փետրվարի 28-ի N 1- Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման N 1 հավելվածում, հաշվի առնելով, որ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների /մանկապարտեզներ, երաժշտական դպրոց/ երեխաների ծնողական գումարները չեն հանդիսանում համայնքի բյուջեի եկամուտ, այլ հանդիսանում են ՀՈԱԿ-ների եկամուտ՝ այդ գումարները, 4625.2 հազար դրամ գումարի չափով, պակասեցնել համայնքի բյուջեի ,,Ոչ հարկային եկամուտներ,, հոդվածից: Նշված գումարները այսուհետ մուտքագրել առևտրային բանկերում բացված ՀՈԱԿ-ների հաշիվներում.

2) որոշման N 1 հավելվածում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի ,,Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում,, ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում Բերդի քաղաքապետին լիազորությունների պատվիրակման 14 մարտի 2011 թվականի N 40 պայմանագիրը, համայնքի բյուջեի ,,Պետության պատվիրակած լիազորություններ,, հոդվածն ավելացնել 15830 դրամ գումարի չափով.

3) որոշման N 1 հավելվածում, հաշվի առնելով, որ պետության պատվիրակած լիազորությունների սահմաններում համայնքի ղեկավարի հետ կնքվող ,,Անասնաբուժական ծառայությունների մատուցման,, պայմանագիրը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը 2011 թվականին նպատակահարմար է գտել կնքել անմիջապես անասնաբույժի հետ՝ համայնքի բյուջեի ,,Դոտացիա,, հոդվածը պակասեցնել 1200.0 հազար դրամ գումարի չափով.

4) որոշման N 2 հավելվածում ,,Կրթություն,, հոդվածից պակասեցնել 3345.4 հազար դրամ, ,,Բերդի երաժշտական դպրոց,, հոդվածից՝ 1279.8 հազար դրամ, ,,Անասնաբուժական ծառայություններ,, հոդվածից՝ 1200.0 հազար դրամ, ,,Պատվիրակված լիազորություններ,, հոդվածին ավելացնել 15830 դրամ:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Բերդի համայնքի
ավագանու 2011 թվականի
մայիսի 18-ի N 8-Ն որոշման

## 2011 թվականի համայնքի տեղական եկամուտները ըստ առանձին հոդվածների

/հազար դրամ/

| Հ/հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ | |
|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5700.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 13100.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4000.00 |
| 5 | ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 7310.50 |
| 6 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ | 2400.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 550.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 9000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 45560.50 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 101371.90 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2525.23 |
| 11 | ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 0.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 103897.13 |
| 12 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | |
| 13 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | |
| 14 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 1049.30 |
| | ԱՄԲՈՂՋԸ | 150506.93 |

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ս. ՇԱՌՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

*Բերդի համայնքի*
*ավագանու 2011 թվականի*
*մայիսի 18-ի N 8 -Ն որոշման*

## Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2011թ.

/հազար դրամ/

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 41880.9 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 31341.8 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 23314.5 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ | 12774.7 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | 17700 |
| 6 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 4000 |
| 7 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 10049.3 |
| 8 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | 1620.5 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2525.23 |
| 10 | ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 0 |
| 11 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5000 |
| 12 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 300 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 150506.93 |

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Ս. ՇԱՌՅԱՆ

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 9-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի բյուջեի ընթացքի մասին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

*Բերդի համայնքի ավագանու*
*2011 թվականի մայիսի 18-ի*
*N 9- Ա որոշման*

## Բերդի համայնքի բյուջեի 2011 թվականի 1-ին եռամսյակի եկամուտների կատարման մասին

/հազար դրամ/

| Հ/հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ | Տարեկան Պլան | 1-ին եռամսյակի պլան | 1-ին եռամսյակի կատարողական | Կատարման % |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5700.00 | 1425.00 | 769.5 | 54.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 13100.00 | 3275.00 | 2255.7 | 68.88 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 | 875.00 | 766.5 | 87.60 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4000.00 | 1000.00 | 495.3 | 49.53 |
| 5 | ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 11935.70 | 2983.90 | 1795.1 | 60.16 |
| 6 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ | 2400.00 | 600.00 | 1087.1 | 181.18 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 550.00 | 137.50 | 70 | 50.91 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 9000.00 | 2250.00 | 1262.4 | 56.11 |
| | **Ընդամենը սեփական եկամուտներ** | **50185.70** | **12546.40** | **8501.60** | 67.76 |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 101371.90 | 25343.00 | 25230.4 | 99.56 |
| 10 | ՔԿԱԳ | 2509.40 | 627.30 | 505.1 | 80.52 |
| 11 | Անասնաբուժական ծառայություն | 1200.00 | 300.00 | 0 | |
| | Ընդամենը պաշտոնական տրանսֆերտներ | 105081.30 | 26270.30 | 25735.50 | 97.96 |
| 12 | **Ֆոնդային բյուջե** | 1049.30 | | | |
| | Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը | 156316.30 | 38816.70 | 34237.10 | 88.20 |

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Ս. Շ Ա Ռ Ո Յ Ա Ն

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Բերդի համայնքի
ավագանու 2011 թվականի
մայիսի 18-ի N 9 -Ա որոշման

## Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2011թ.

/հազար դրամ/

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 41880.9 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 31341.8 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 23314.5 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ | 12774.7 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | 17700 |
| 6 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 4000 |
| 7 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 10049.3 |
| 8 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | 1620.5 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2525.23 |
| 10 | ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 1200 |
| 11 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5000 |
| 12 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 300 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 151706.93 |

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Ս. ՇԱՌՅԱՆ

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 10- Ա

„ԲԵԼՌՈՒՍ„ ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱԿՏՈՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով և 61-րդ հոդվածի 3-րդ մասով

**համայնքի ավագանին որոշում է**

„Բելոռուս„ մակնիշի տրակտոր ձեռք բերելու նպատակով տրամադրել 4 մլն դրամ համայնքի բյուջեի„Գյուղատնտեսություն„ նախահաշվի /04.02.01.51/ „Այլ մեքենաներ և սարքավորումներ„ /5129/ հոդվածից: Այդ նպատակով „Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսեր„ նախահաշվի /11.01.02.52/ „Համայնքի ֆոնդային բյուջեի պահուստային միջոցներ„ /4891/ հոդվածից 4 մլն դրամ ուղղել համայնքի բյուջեի „Գյուղատնտեսություն„ նախահաշվի /04.02.01.51/ „Այլ մեքենաներ և սարքավորումներ„ /5129/ հոդվածին:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 11- Ա

# ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 4 ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**համայնքի ավագանին որոշում է**

1. Համայնքի սեփականությունը համարվող, Լեոն Բեկի 10 հասցեում գտնվող 114.8 քմ մակերեսով 4 ավտոտնակներն օտարել աճուրդով: Մեկնարկային գինը սահմանել 445000 դրամ:
2. Աճուրդի անցկացման մասին տալ հայտարարություն ,,Հայաստանի Հանրապետություն,, օրաթերթում:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 12-Ա

# ԲԵՐԴԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն Արմեն Վաղարշակի Մելիքյանին, ծնված 1977 թվականին, կրթությամբ միջնակարգ, Բերդի մշակույթի տան տնօրեն նշանակելու համար:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 13-Ա

# ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 1 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ, 7 ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ 2 ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006 թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով

**համայնքի ավագանին որոշում է**

1. Մաշտոցի փողոցի 84-45/1 հասցեում գտնվող 38,4 քմ մակերեսով առևտրի սրահը, 380160 դրամով և նրա զբաղեցրած 38,4 քմ մակերեսով հողամասը 31040 դրամով ուղղակի վաճառքով օտարել Համլետ Աթոյանին:
2. Տերյան 20$^{Ա}$ հասցեում գտնվող 83,6 քմ մակերեսով ավտոտնակը 91960 դրամով և նրա զբաղեցրած 83,6 մակերեսով հողամասը 67716 դրամով ուղղակի վաճառքով օտարել Իրինա Բաղալյանին:
3. Տերյան 20$^{Բ}$ հասցեում գտնվող 90 քմ մակերեսով ավտոտնակը 99000 դրամով և 45,03 քմ մակերեսով հողամասը 36474 դրամով ուղղակի վաճառքով օտարել Հասմիկ Մելիքբեկյանին:
4. Խորենացու 27$^{Բ}$ - 1$^{Ա}$ հասցեում գտնվող 24,5 քմ մակերեսով ավտոտնակը 26950դրամով և նրա զբաղեցրած 24,5 քմ մակերեսով հողամասը 19845 դրամով ուղղակի վաճառքով օտարել Ալբերտ Գրիգորյանին:
5. Խորենացու 28 -1$^{Բ}$ հասցեում գտնվող 35 քմ մակերեսով ավտոտնակը 38500 դրամով և նրա զբաղեցրած 35 քմ մակերեսով հողամասը 28350 դրամով ուղղակի վաճառքով օտարել Գալուստ Մելքումյանին:
6. Մաշտոցի 21-1$^{Գ}$ հասցեում գտնվող 20 քմ մակերեսով ավտոտնակը 22000 դրամով և նրա զբաղեցրած 20 քմ մակերեսով հողամասը 16200 դրամով ուղղակի վաճառքով օտարել Ալբերտ Պապյանին:
7. Եղիշեի 58$^{Ա}$ հասցեում գտնվող 5,67 քմ մակերեսով օժանդակ կառույցը 12936 դրամով և 48,6 քմ մակերեսով հողամասը 39390 դրամով ուղղակի վաճառքով օտարել Սուրեն Մելիքյանին:
8. Խորենացու 28 -1$^{Գ}$ հասցեում գտնվող 27 քմ մակերեսով ավտոտնակը 29700 դրամով և նրա զբաղեցրած 27 քմ մակերեսով հողամասը 21870 դրամով ուղղակի վաճառքով օտարել Գալուստ Մելքումյանին:
9. Մաշտոցի 15-2$^{Ա}$ հասցեում 6.80 քմ մակերեսով օժանդակ շինությունը 14960 ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման 22 քմ մակերեսով հողամասը 17820 դրամով ուղղակի վաճառքով օտարել Նվեր Զաքինյանին:
10. Մաշտոցի փողոցի հարևանությամբ գտնվող 84 քմ մակերեսով ավտոտնակը 92400 դրամով և նրա զբաղեցրած 49 քմ մակերեսով հողամասը 39690 դրամով ուղղակի վաճառքով օտարել Սուսաննա Պողոսյանին:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 14-Ա

## ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով

**համայնքի ավագանին որոշում է**

Վարձատրվող հասարակական աշխատանքների ոլորտում ,,Բերդ քաղաքի ճանապարհների բարեկարգում և սանիտարական մաքրման օժանդակ աշխատանքներ,, ծրագիրն իրականացնելու նպատակով կատարել ներդրում 316400 դրամի չափով` համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

# ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 15- Ա

## ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻՆ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով

**համայնքի ավագանին որոշում է**

Մանկական զբոսայգին բարեկարգելու նպատակով մշակույթի տանը տրամադրել 100000 դրամ՝ համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 16- Ա

# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով

**Համայնքի ավագանին որոշում է**

1. Զեղչել սեփական մեքենա ունեցող համայնքի ներքոհիշյալ անդամների 2011 թ. գույքահարկի գումարները հետևյալ չափերով.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խաչատրյան | Արմեն | Շամիրի | Վազ 2106 | 4666 դրամ |
| Մելքումյան | Գալուստ | Մաքսիմի | Օպել | 5833 դրամ |
| Ղալլաքյան | Հրանտ | Ունանի | Մ-2140 | 4375 դրամ |
| Մերկերյան | Հրանտ | Տիգրանի | Գազ 69 Ա | 5250 դրամ |

2.50%-ով զեղչել այն անձանց գույքահարկի նախորդ տարիների պարտքը, ովքեր կմարեն պարտքի 50%-ը:

| | | | |
|---|---|---|---|
| Մայիսյան | Զոյա | Վազ 2105 | 13110 դրամ |

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան